ՈՒԽԱՐԴ ՎԱԳՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՍԻՄՊՈԶԻՈՒՄ

17-18
'11/2018'



ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ | ORGANIZERS

INSTITUTE FOR CONTEMPORARY ART

ARé performing arts festival

ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Botschaft der Bundesrepublik Deutschland Eriwan

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ
KOMITAS MUSEUM-INSTITUTE

Artbridge

www.arepaf.am

www.karoyangallery.com

www.eriwan.diplo.de

www.komitasmuseum.am

www.artbridge.am

Նկարազարդումները տրամադրեց՝ Ժիրի Վորթուբան
Ձևավորումը՝ Էդիկ Պողոսյանի

ՌԻԽԱՐԴ ՎԱԳՆԵՐ

Վիլհելմ Ռիխարդ Վագներ (1813-1883) - գերմանացի կոմպոզիտոր, թատերական ռեժիսոր, փիլիսոփա և դիրիժոր, որը հիմնականում հայտնի է իր օպերաներով (կամ, ինչպես դրանցից վերջինները հայտնի են՝ երաժշտական դրամաներով):

Ի տարբերություն օպերային այլ կոմպոզիտորների, իր բեմական ստեղծագործությունների համար Վագները գրել է թե՛ լիբրետոն և թե՛ երաժշտությունը: Սկզբնական շրջանում իր հեղինակությունը ստեղծելով որպես Կ.Մ.Վեբերի և Գ.Մեյերբերի ռոմանտիկական ուղղության շարունակող, Վագներն այնուհետև հեղափոխեց օպերան Գեզամթկունսթվերքի (արվեստի համապարփակ գործ) իր հայեցակարգով, որով նա ձգտում էր սինթեզել բանաստեղծական, տեսողական, երաժշտական և դրամատիկական արվեստները՝ մինչև իսկ երաժշտությունը ստորադասելով դրամային:

Իր այս տեսլականը Վագները ներկայացրել է 1849-1852 թթ. հրապարակած մի շարք հոդվածներում: Այս գաղափարները առավելագույնս չափով կոմպոզիտորը ներկայացրեց իր «Նիբելունգի մատանին» օպերային տետրալոգիայի առաջին երկու օպերաներում:

Երաժշտության, դրամայի և քաղաքականության վերաբերյալ Վագների գրվածքների ընդգծված հակասական բնույթը հատկապես 20-րդ դարի վերջից սկսած մեծ ուշադրության է արժանացել՝ դառնալով բազմաբնույթ քննարկումների առարկա: Նրա գաղափարների ազդեցությունը կարելի է դիտարկել 20-րդ դարի արվեստի բազմաթիվ բնագավառներում, որը տարածվում է երաժշտությունից, փիլիսոփայությունից, գրականությունից, տեսողական արվեստներից և թատրոնից անդին:

«ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՀՂԱՆՑՔԸ

Ամեն ինչ ապրում և հարատևում է
իր ներքին անհրաժեշտության,
սեփական բնության կարիքից ելնելով:
Ռիխարդ Վագներ

19-րդ դարի փիլիսոփայական, երաժշտական, վիզուալ և կատարողական արվեստների տարատեսակ խմորումներն ու հատկապես դրանց ներքին կապերի խնդիրները թերևս իրենց առաջին հստակ բնորոշումը ստացան Ռիխարդ Վագների (1813 – 1883) մոտ՝ հարթելով մոդեռն և ժամանակակից արվեստների զարգացումների առաջնահերթությունները:

Իր «Ապագայի արվեստի ստեղծագործությունը» էսսեում / Das Kunstwerk der Zukunft; 1849թ/ Ռ.Վագներն առաջին անգամ ներկայացրեց իր «Գեզամթկունսթվերք» /Gesamtkunstwerk/ կամ «Տոտալ/համապարփակ արվեստ» հայեցակարգը: Մարդկային փորձի ողջ սպեկտրը ներգրավելու և սեփական օպերաներում արտացոլելու ցանկությունը նրան հրահրեց հավասար ուշադրություն դարձնել վերջնական արդյունքի բոլոր բաղկացուցիչների վրա: Նա համոզված էր, որ միայն այսօրինակ ինտեգրումով է հնարավոր հասնել արտահայտչականության այնպիսի որակի, որը կդառնար շարժիչ ուժ՝ ընդհանրապես արվեստի փոխակերպման համար:

Gesamtkunstwerk- ի վագներյան առաջադրումը բոլոր արվեստների իդեալական միության, դրանք սինթեզելու մասին է: Սա արվեստների ինտեգրման համապարփակ, գործնական և տեսական համակարգ ստեղծելու առաջին փորձերից մեկն էր: Իրավամբ, դժվար է գերագնահատել այս գաղափարի ուժն ու ազդեցությունը արվեստի զարգացման հետագա հարյուրյոթանասուն տարիների ընթացքում:

20-րդ դարի արվեստագետները շարունակեցին հանդիսատեսի փորձառությունը լիարժեք

դարձնելու ջանքերը՝ հնարավորինս միասնական դարձնելով ավանդաբար առանձին դիսցիպլինների ներկայությունը արվեստի մեկ ստեղծագործության մեջ: Այդ արվեստագետներից շատերը կարծում էին, որ արվեստի ստեղծագործության ամբողջական ընկալումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ փորձառության մեջ ներգրավված է ընկալման հնարավորությունների ամբողջ տիրույթը: Ըստ այդ արվեստագետների, ժամանակի արագությունը, էներգիան և հակասությունները, չէին կարող արտահայտված լինել արվեստի հին, «սահմանափակ ձևերի» միջոցով, երբ թղթի վրա բառ էր, կտավի վրա՝ նկար, երաժշտական ստեղծագործությունն էլ որևէ երաժշտական գործիք էր պահանջում:

Արդեն 1916թ. իր «Ֆուտուրիստական կինոն» մանիֆեստում Ֆ.Տ. Մարինետտին և նրա հեղափոխական խումբը կինոն հայտարարում են բարձրագույն արվեստ, քանի որ այն ի վիճակի է ներառել արվեստի բոլոր մյուս տեսակները՝ սինթեզելով դրանք և ծառայեցնելով ընդհանուր կոնցեպտին:

20 –րդ և հետո նաև 21-րդ դարերի արվեստի զարգացումը, սակայն, ցույց տվեց, որ այս միտումը ներծծվեց բոլոր մյուս արվեստների մեջ՝ հետզհետե ավելի ու ավելի դառնալով նոր, հասկանալի ու ընդունված իրողություն:Դադաիստների, Բաուհաուզի ներկայացուցիչների, հեփփենիգների, պերֆորմանսների պատմությունը հենց դրա մասին է: Մեր օրերում նորագույն տեխնոլոգիաների օգտագործման շնորհիվ այս մտայնությունը մտել է նոր փուլ:

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ֆրանսահայ թարգմանիչ, գրաքննադատ, փիլիսոփա և թարգմանության տեսաբան Մարկ Նշանեանը եղել է Ֆիլիպ Լաքու-Լաբարտի և Ժան-Լյուկ Նանսիի ուսանողը Ստրասբուրգում: Դասավանդել է Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հայաստանում, Թուրքիայում և Իտալիայում: Նշանեանը հայերենով հրատարակել է միացյալ աշխատությունների մի շարք, որը ներառում է արդի և ժամանակակից փիլիսոփայության գրաքննադատությանն ու թարգմանություններին նվիրված աշխատանքներ: Նա բազմաթիվ գրքերի հեղինակ է, այդ թվում՝ «Entre l'art et le témoignage» (Արվեստի և վկայության միջև) ժամանակակից հայ գրականության բազմահատոր ուսումնասիրության, որի առաջին հատորը վերնագրված է«Աղետի հեղինակներ. Հայ գրականությունը 20-րդ դարում »: Նա «Կամ» հայալեզու գրական-վերլուծական պարբերականի խմբագիրն է, ինչպես նաև Մ. Բլանշոյի, Ֆ. Նիցշեի, Ա. Բերմանի, Ժ. Բաթայի, Վ. Բենիամինի, Կ. Վ. Շլեգելի և այլոց աշխատությունների թարգմանիչը:

ԱՌԱՍՊԵԼ, ԱՐՈՒՍԵՏ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Լիակատար արուեստի գործ»: Բառը եւ գաղափարը կ'երեւին Վագների գրչին տակ 1849ին, ծրագրային ու փիլիսոփայական գրուածքներու մէջ: Կ'երեւին այնպիսի շրջանի մը երբ Վագներ Ցիւրիխ ապաստանած էր: Արուեստի յեղափոխութեան ետին, որպէս անոր հնարաւորութեան պայմանը, կանգնած էր քաղաքական յեղափոխութիւ-

նը: Աւելի ուշ՝ արուեստի մարզին մէջ յեղափոխութիւնը պիտի դառնար առաջնակարգ, պիտի ըլլար ինքն իր պայմանը, ու քաղաքականին հետ պիտի ընդելուզուէր վերջնականապէս: «Gesamtkunstwerk» բառը պիտի չգործածուէր վերստին Վագներին կողմէ: Բայց անշուշտ գաղափարը պիտի մնար ի զօրու: Արուեստը որպէս համայնացնող, ուրեմն խորագոյն իմաստով՝ քաղաքական: Եւ բնական է՝ այդ «համայնացնող» արուեստի գաղափարը չէր կրնար երեւան գալ առանց առասպելական աշխարհի վերայժմէականացումի գործողութեան մը: Արուեստի, առասպելի եւ համայնացումի միջեւ այս հանգոյցը գերմանական մտասեւեռում մը եղած է Վիպապաշտներէն սկսեալ: Շելլինգի լման արուեստի փիլիսոփայութիւնը այդ հանգոյցին վրայ հիմնուած է:

Համայնացնող արուեստի այս գաղափարը, եւ ուրեմն գեղագիտական այս սկզբունքը, ԺԹ. դարու մէկ ծայրէն միւսը գրաւած է գերմանական միտքերը, անցած է Նիցչէին, ու անցած է Ի. դարուն, մինչեւ Հայդեգեր: Եւ անխուսափելիօրէն անցած է նաեւ Հայերուն: 1914ի սկիզբը Պոլսոյ մէջ լոյս տեսնող Մեհեան հանդէսի էջերէն, Կոստան Զարեան պիտի ըլլար «գեղագիտական սկզբունք»ին փողահարը, վարակիչ ձեւով: Յակոբ Օշական պիտի յայտարարէր որ վերջ տալու համար մեր ժողովուրդի պառակտումին, պէտք ունինք «տիեզերական կեղծիք»ի մը, այսինքն յայտնօրէն՝ վերայժմեացած առասպելի մը, եւ զայն պիտի ստեղծեն «արուեստագէտներ»ը:

Ուրեմն այսօրուան դասախօսութիւնը պիտի ունենայ երեք բաժին: Առաջին բաժինը պիտի հետեւի Gesamtkunstwerk-ի գաղափարի ճակատագրին Վագների գրական արտադրութեան մէկ ծայրէն միւսը: Երկրորդ բաժինը պիտի պատմէ գեղագիտական հանգոյցին պատմութիւնը ԺԹ. դարուն, ցոյց տալով ի միջի այլոց թէ ինչպէս Հայերն ալ ազդուած են անկէ: Երրորդ բաժինը պիտի կարդայ անգամ մը եւս՝ Կաֆկայի Ժոզեֆինան, բացատրելով թէ ինչպէս Կաֆկա բեմադրած է գեղագիտական հանգոյցը, երեւութապէս Վիպապաշտներուն հետ երկխօսութիւն մը ստեղծելով: Բայց խորքին մէջ՝ Վագներին հետ տարօրինակ երկխօսութիւն մըն էր Կաֆկային կատարածը:

ՆԱԶԱՐԵԹ ԿԱՐՈՅԱՆ

Նազարեթ Կարոյանը արվեստի քննադատ է, համադրող, Ժամանակակից արվեստի ինստիտուտի հիմնադիր տնօրենը: Եղել է ԱԻԿԱ – Հայաստանի հիմնադիրներից մեկը և նրա առաջին նախագահը: 1980-ներից սկսած իր գործունեությամբ նպաստել է հայաստանյան ժամանակակից արվեստի միջավայրի կայացմանը. հարել է «Սև Քառակուսի» խմբին, «3–րդ հարկ» շարժմանը, ինչպես նաև Հայաստանում արվեստի առաջին մասնավոր ցուցասրահների նախաձեռնողներից է, հիմնադրել ու խմբագրել է ժամանակակից արվեստի առաջին «Ին Վիտրո» հանդեսը: Համադրել է շուրջ երկու տասնյակ ցուցահանդեսներ Հայաստանում և արտերկրում: Իր բազմաթիվ քննադատական ու վերլուծական հոդվածներում ուսումնասիրում է Հայաստանի արվեստի ինստիտուցիոնալ համակարգի կայացման, Եվրոպայի հետ հաղորդակցության, ժամանակակից արվեստում սոցիալ-քաղաքական և մեդիա համատեքստերի արտացոլման խնդիրները:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ. Ո՞Վ Է ԱՊԱԳԱՅԻ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

Ներկայացնելով արվեստի տարբեր տեսակները մեկ ամբողջական ստեղծագործության մեջ միաձուլելու գաղափարը (Gesamtkunstwerk) իր «Ապագայի գեղարվեստական ստեղծագործությունը» (Das Kunstwerk der Zukunft, 1849) նշանավոր գրքում, և գրքի վերջին 5-րդ գլուխը խորագրելով «Գալիքի արվեստագետը», Ռիխարդ Վագները հարց է բարձրացում. «Իսկ ո՞վ կարող է լինել գալիքի այն արվեստագետը», ով կկարողանա այդ համադրումը իրականացնել:

Քննադատելով իր դարաշրջանի արվեստագետին, ինչպես նաև արվեստի գործող հաստատությունները՝ ներկայի իրենց սահմանափակ կարողությունները և պատկերացումները ապագայի վրա տարածելու մեղքի մեջ, գերմանացի կոմպոզիտորը եզրակացնում է, որ ապագայի արվեստագետը ժողովուրդն է:

Անդրադառնալով այն պատմական զարգացումներին, որոնք վագներյան «արվեստի համապարփակ ստեղծագործություն» կոնցեպտի ազդեցության ներքո տեղի են ունեցել 19-20-րդ դարերի արվեստի պրակտիկաներում և տեսություններում, իմ բանախոսության մեջ կփորձեմ ցույց տալ, թե ինչպես են կապված միմյանց հեղափոխությունը և արվեստը, ինչ դեր ունի դրանում կոլեկտիվ ստեղծագործությունը և ինչպես կարելի է այսօր վերանվանել կոլեկտիվ հեղինակին:

ՀՐԱՉ ԲԱՅԱՂՅԱՆ

Հրաչ Բայաղյանը մշակութաբան է: Նա Երևանի պետական համալսարանի դասախոս է, որտեղ, ի թիվս այլ դասընթացների, դասավանդում է Մեդիայի և մշակութային ուսումնասիրություններ և ղեկավարում «Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն» մագիստրոսական ծրագիրը (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ): Նա դասավանդում է նաև Ժամանակակից արվեստի ինստիտուտում: Վերջին տարիների նրա հետազոտական հետաքրքրությունները հիմնականում վերաբերում են մի ընդարձակ և քիչ ուսումնասիրված տիրույթի, որ կարելի է նկարագրել «արևելահայ արդիություն» նախնական անունով: Սա տրամադրում է որոշակի տեսանկյուն՝ քննության առնելու համար խորհրդային և ետխորհրդային շրջանի հայկական մշակութային փորձառության տարբեր ասպեկտներ:

Նա փորձում է օգտագործել այնպիսի ժամանակակից հետազոտական տիրույթների տրամադրած մոտեցումներն ու գործիքները, ինչպես Գաղութային դիսկուրսի եւ ետգաղութային ուսումնասիրությունները և Մշակութային ուսումնասիրությունները: Նրա վերջին շրջանի հոդվածները վերաբերում են «ազգային մշակույթի» հարցին և մշակութային դիմադրության ձևերին Խորհրդային Հայաստանում, սպառողական մշակույթի ձևավորմանը ետխորհրդային Հայաստանում, մասնավորապես՝ քաղաքային տարածությունների փոխակերպումներին:

GESAMTKUNSTWERK, ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է Gezamtkunstwerk-ի գաղափարի, ինչպես այն մշակված է Ռիխարդ Վագների «Արվեստ

և հեղափոխություն» (1849) էսսեում, կարևորությունը քսաներորդ դարի սկզբի ռուսական մոդեռնիստական շարժումների, մասնավորապես խորհրդային ավանգարդի տեսությունների ու պրակտիկաների ձևավորման համար: Արվեստի ամբողջական գործի իրականացումը ավանգարդի համար նշանակում էր արվեստի հանրային գործառույթի վերականգնումը, ճշմարիտ հեղափոխական մշակույթի ստեղծումը ի նպաստ նոր հասարակության կառուցման:

Շատ է խոսվել խորհրդային ավանգարդի մշակութային քաղաքականությունների արմատականության, արվեստագետների քաղաքական հավակնությունների, բոլշևիկյան պետության հետ ավանգարդային շարժումների հարամիտման մասին: Մինչդեռ շատ ավելի քիչ ուշադրություն է դարձվել այն բանին, թե ինչպես էր խորհրդային (ռուսական) ավանգարդը 1920-ականներին ծառայում բոլշևիկյան մշակութային գերիշխանության (հեգեմոնիայի) ձևավորմանը Խորհրդային Միությունում՝ առաջարկելով ընդհանուր մշակույթ հարյուրավոր ազգությունների, տարբեր կրոնների ու մշակույթների մարդկանց համար:

Այս տեսանկյունից՝ մեկնաբանական առումով օգտակար է թվում՝ քսանականների մի խումբ խորհրդահայ առաջատար արվեստագետների գործունեության մեջ ընդգծել և քննարկել մշակութային դիմադրության, հակագերիշխանական դիրքորոշման դրսևորումները: Այս դեպքում, ինչ իմաստ կարող էր ունենալ (եթե առհասարակ ինչ-որ իմաստ կարող էր ունենալ) արվեստի ամբողջական գործի գաղափարը խորհրդահայ արվեստագետների՝ որպես անհատների, խմբերի ու շարժումների, և որպես Խորհրդային Հայաստանում մշակույթի հաստատութենականացման (ինստիտուցիոնալացման) ու զարգացման ընթացքի գործուն մասնակիցների աշխատանքի համար, եթե հաշվի առնենք այնպիսի հանգամանքներ, ինչպես Սարյանի քննադատական վերաբերմունքը մոդեռնիզմի նկատմամբ, Թամանյանի կողմից կոնստրուկտիվիզմի մերժումը, Չարենցի հրաժարումը ֆուտուրիզմից, և մյուս կողմից, նրանց խորին ներգրավվածությունը սոցիալիստական հասարակության կառուցման գործին, որ միաժամանակ ընկալվում էր որպես ազգային վերածնություն, որպես ազգաշինության գործընթաց:

ՎԱՐԴԱՆ ՁԱԼՈՅԱՆ

Մշակութաբան, արվեստի քննադատ և կուրատոր: AICA-Հայաստանի «Արտլաբորատորիա» ստեղծագործական խմբի անդամ է : Կրթությամբ միջուկային ֆիզիկոս է՝ 1985 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտը: Արվեստի և փիլիսոփայության մի շարք միջազգային կոնֆերանսների մասնակից է, հրապարակել է հարյուրից ավելի 100 հոդվածներ արվեստի մասին որոնք տպագրվել են արվեստի գրքերում, բուկլետներում և մամուլում: Զբաղվում է նաև մշակութաբանությամբ, գրականության և կինոյի քննադատությամբ: Քաղաքական բազմաթիվ վերլուծական հոդվածների հեղինակ է, որոնք վերաբերվում են նեոլիբերալիզմին, ազգայնականությանը, ժողովրդավարությանը և այլն:

GESAMTKUNSTWERK. ՌԻԽԱՐԴ ՎԱԳՆԵՐԻ «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԿՈՆՑԵՊՏԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1849 թ.-ին, 36 տարեկան հասակում, Ռիխարդ Վագները գրեց «Ապագայի արվեստի ստեղծագործություն» ծրագրային հոդվածը, որտեղ նա արտահայտեց իր քննադատական վերաբերմունքը գերակշռող հասարակական կարգի, առաջին հերթին՝ արվեստի հանդեպ: Այս հոդվածում նա ձևակերպում է Gesamtkunstwerk-ի հղացքը, որը ամենատարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց:

Հատկապես խնդրական է Gesamt հատվածը, որը կարելի է թարգմանել որպես /համ/ ընդհանուր, այնպես էլ սինթետիկ: Ռիխարդ Վագները Gesamt-ը դիտարկում է, ինչպես արվեստի ստեղծագործության, այնպես էլ՝ արվեստի ստեղծագործության հանդիսատեսի տեսանկյունից: Մերժելով «արվեստը արվեստի համար» սկզբունքը, նա համարում էր, որ արվեստի ստեղծագործությունը պետք է կողմնորոշված լինի դեպի ապագան, լինի հեղափոխական, կողմնորոշված լինի դեպի ժողովուրդը:

Ռ. Վագների դատողությունների հիմքը «ժողովուրդ»-ի ինքնատիպ կոնցեպտն է, որը սահմանվում է որպես «ընդհանուր կարիք ունեցող բոլորի համախմբվածություն» («совокупность всех, связанных общей нуждой»): Ժամանակակից ձախ քաղաքական տեսությունները /Ժ. Ռանսյեր, Շ. Մուֆֆ, Է. Լակլո և այլն/ փորձում են վերաիմաստավորել «ժողովուրդ» կոնցեպտը, ինչպես նաև «ապագայի» հղացքը, որը նույնպես հիմնային նշանակություն ունի Ռ. Վագների համար:

Ձեկուցումը կանդրադառնա այս զարգացումներին և Gesamtkunstwerk-ի ակտուալությանը ժամանակակից քաղաքականության մեջ և արվեստում:

ՄԱՐԻՆԵ ԿԱՐՈՅԱՆ

Դաշնակահար, երաժշտագետ է: Դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում, Մանկավարժական համալսարանում: Հիմնադրել և ղեկավարել է Դիլիջանի միջազգային դպրոցի Երաժշտության բաժինը: Թեկնածուական թեզը պաշտպանել է երաժշտության հոգեբանության գծով: Ծավալում է համերգային գործունեություն որպես դաշնակահար: Հանդես է գալիս դասախոսություններով՝ երաժշտության տարատեսակ հարցերի շուրջ:

Հետաքրքրությունների մյուս ուղղվածությունը ժամանակակից արվեստն է: «ԱՐԷ» կատարողական արվեստների փառատոնի հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարն է,

«ԿԱՐՈՅԱՆ ցուցասրահ»-ի տնօրենը:

Ռ. ՎԱԳՆԵՐ. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐՎԵՍՏ ԹԵ՞ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱՄԱ: ՓՈԽԱՐԿՎՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Gesamtkunstwerk- ի արտահայտած համապարփակության իդեալը 19-րդ դարի թերևս ամենաունիվեսալ և ամենաճկուն գաղափարներից մեկն էր:

Ռ. Վագների գրվածքների ուշադիր ընթերցումը մեծ տեսադաշտ է բացում միասնականության այդ իդեալի հնարավորությունների և նշանակությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ նշենք, որ հայեցակարգն այս այնքան ընդգրկուն է, որ հնարավոր է այն ակորդեոնի նման սեղմել ու ընդլայնել՝ նույնիսկ շրջանցելով Վագներին հղումները:

Մեր ելույթը կենտրոնացված կլինի Վագների երկու ցյուրիխյան տեքստերի վրա, որտեղ նա զարգացնում է արվեստի հիբրիդի իր գաղափարը: Մինչ «Ապագայի գեղարվեստական ստեղծագործությունը» (1849/50) ամբողջովին յուրահատուկ և քաղաքականապես արմատական գրվածք է, այնուամենայնիվ հեղինակը շատ արագ հեռանում է իր այս դիրքորոշումից:

Նրա «Օպերա և դրամա» տեքստն (1851) արդեն շատ ավելի փոքր ծավալի հեղափոխական վերլուծություն է պարունակում, որտեղ արվեստների համընդհանրության գաղափարը այլևս հստակ տեղայնացված է: Վագները սույնով փոխակերպում է Gesamtkunstwerk-ի իր ունիվերսալ և ընդգրկուն տեսլականը ավելի հակվելով դեպի դրա առավել գործնական տարբերակը՝ գիտակցելով, որ սահմանները հստակեցնելու անհրաժեշտություն կա:

Երեք քույրերի (երաժշտություն, պար, գեղարվեստական տեքստ) ոգեշնչող ու գայթակղիչ միասնության գաղափարը արագ պարզեցվում է, երբ հստակեցվում են արվեստագետի և արվեստի խնդիրների լուծման հրամայականները: Ի վերջո, Վագներն ակնհայտորեն հակվում է դեպի ավելի պրակտիկ տեսլական, որն էր համակարգային մոտեցումը (системный подход), որտեղ արդեն ամբող համակարգը հավաքվում է մեկ առանցքի շուրջ: Վագների համար, բնականաբար, այլ առանցք չէր կարող լինել, քան երաժշտությունը:

Հենց այս առանցքն էլ կլինի մեր ուսումնասիրության դիտակետը:

ԿԻՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան երկու մասնագիտությամբ՝ ջութակահար և երգիչ: Երկու մասնագիտությունները ներհյուսված են երաժշտի գործունեության մեջ: Ներկայումս նա Ա.Սպենդիարյանի անվան հայկական ազգային օպերայի և բալետի թատրոնի, «Հովեր» հայկական պետական կամերային երգչախմբի, ինչպես նաև «Հայ Ձայներ» վոկալ սեպտետի մենակատար է: Որպես ջութակահար, նա Ա.Սպենդիարյանի անվան հայկական ազգային ակադեմիական օպերայի և բալետի թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի անդամ է:

Համագործակցել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, Պետական երիտասարդական նվագախմբի, Հայաստանի պետական մենակատարների անսամբլի, Արցախի պետական երգչախմբի, Արցախի պետական կամերային նվագախմբի հետ:

Ռ. ՎԱԳՆԵՐ – ՎԵՅԶԵՆԴՈՆՔ ԵՐԳԵՐ; WWV 91

«Վեյզենդոնք երգեր»-ը Ռիխարդ Վագների հինգ երգերից բաղկացած շարքի ընդհանուր անունն է: Մաթիլդա Վեյզենդոնքի բանաստեղծություններ-ի հիման վրա գրված այս երգերը ստեղծվել են ճիշտ այն ժամանակահատվածում, երբ Վագներն աշխատում էր իր «Տրիստան և Իզոլդե» օպերայի վրա (1857-60): Երգերի այս շարքը, «Siegfried Idyll»- ի հետ միասին, առավել հաճախ կատարվող Վագների երկու ոչ -օպերային ստեղծագործություններն են:

Եվ չնայած շարքի երկու երգերին Վագները երթավերնագրեր է գրել՝ նշելով դրանք որպես «Տրիստան և Իզոլդե» օպերայի վրա աշխատելու էտյուդներ, իրավամբ դժվար է այս ստեղծագործությունները «էտյուդ» անվանել:

Երգերն այս ոչ միայն բառերի և երաժշտության կոմպոզիտորական համադրումներն են, այլև յուրատեսակ փաստաթղթեր այն սերտ բարեկամության և սիրային կապի, որ կար ամուսնացած բանաստեղծուհու և կոմպոզիտորի միջև: Եվ, թերևս, տեքստի ու երաժշտության մետաֆիզիկական այսպիսի միասնությունը իրական կյանքի, մի սիրո պատմության թափանցիկ արտացոլանքն է:

1. Հրեշտակը
2. Կանգնիր
3. Ջերմոցում
4. Ցավ
5. Երազներ

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 1. Նոյեմբեր 17, 2018

11:00 – 11:30
Սիմպոզիումի բացում / ծրագրի ներկայացում

11:30 – 11:45 Բացման խոսք. Հայաստանում Գերմանիայի Դաշնության պատվավոր Դեսպան, պրն. Մաթիաս Քիսլեր

11:45 – 12:45 Բանախոս՝ Հրաչ Բայադյան
«Gesamtkunstwerk, բոլշևիկյան գերիշխանություն և մշակութային դիմադրություն», ՀԵՊ

12:45 – 13:15 Կեսօրյա նախաճաշ

13:15 – 14:15 Բանախոս՝ Մարինե Կարոյան
«Ռ. Վագներ. Համապարփակ արվեստ թե՞ Երաժշտական դրամա: Փոխարկվող առաջնահերթություններ», ՀԵՊ

14:15 – 15:15 Բանախոս՝ Վարդան Ջալոյան
«Gesamtkunstwerk. Ռիխարդ Վագների «Ժողովուրդ» կոնցեպտն ու արդիությունը», ՀԵՊ
Վարող՝ Նազարեթ Կարոյան

ՕՐ 2. Նոյեմբեր 18, 2018

11:00 – 11:15 Առաջին օրվա նյութի ընդհանրացում / օրվա ծրագրի ներկայացում

11:15 – 12:15 Բանախոս՝ Նազարեթ Կարոյան
«Հեղափոխությունը և արվեստը. Ո՞վ է ապագայի արվեստագետը», ՀԵՊ

12:15 – 13:15 Բանախոս՝ Մարկ Նշանեան
«Առասպել, արվեստ, քաղաքականություն», ՀԵՊ
Վարող՝ Հրաչ Բայադյան

13:15 – 13:45 Կեսօրյա նախաճաշ

13:45 – 14:15 Երաժշտական ընդմիջում
Ռ. Վագներ – Վեյզենդոնք երգեր; WWV 91
(Հինգ երգ Մ. Վեյզենդոնքի բանաստեղծությունների հիման վրա)
Կիմ Սարգսյան – բաս բարիտոն
Մարինե Կարոյան - դաշնամուր

14:15 – 15:15 Կլոր սեղան / Քննարկում.
«Հակասությունները՝ Ռ. Վագների երաժշտական, փիլիսոփայական և քաղաքական ստեղծագործության մեջ»
Մասնակիցներ՝ Մարինե Կարոյան, Հրաչ Բայադյան, Վարդան Ջալոյան, Նազարեթ Կարոյան
Վարող՝ Մարկ Նշանեան